ՀԱՍԱՐԱԿԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԿԵՆՏՐՈՆ (ՀՈՒԿ)

ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱՄԵՐԻԿՅԱՆ ՀԱՄԱԼՍԱՐԱՆ

Հասարակական ուսումնասիրությունների կենտրոնը /ՀՈՒԿ/ հիմնադրվել է 1995 թվականին Հայաստանի ամերիկյան համալսարանի նախաձեռնությամբ: Կենտրոնի առաջնահերթ նպատակն է իրականացնել կիրառական-գիտական բազմաճյուղ հետազոտություններ Հայաստանի եւ տարածաշրջանի ժամանակակից սոցիալ-քաղաքական եւ իրավագիտական բնագավառներում: Կենտրոնի խնդիրն է նաեւ նպաստել Հայաստանի եւ տարածաշրջանի գիտական ճանաչմանը, նախաձեռնել համատեղ քննարկումներ եւ հասարակությանը մատուցել անվճար բազմաբնույթ ծառայություններ:

ՀՈՒԿ-Ի ՂԵԿԱՎԱՐ ՍԿԶԲՈՒՆՔՆԵՐԸ

Հայաստանի ամերիկյան համալսարանը /ՀԱՀ/ 1993 թ.-ին բացելով իր քաղաքագիտության եւ միջազգային հարաբերությունների բաժինը՝ ձգտում էր ամրապնդել այն կրթական հիմքը, որի վրա Հայաստանում կառուցվելու էր ժամանակակից եւ ժողովրդավարական հասարակություն: Շեշտը դնելով օբյեկտիվ վերլուծության ուսուցմանը, համալսարանը ձգտում էր ուսանողների մեջ զարգացնել Հայաստանում անկախ պետականության եւ ժողովրդավարական քաղաքական կուլտուրայի ձեւավորման հետ կապված խնդիրների ընկալումը: ՀՈՒԿ-ի հիմնադրումով, համալսարանը նպատակաուղղվում է շարունակել իր կրթական առաքելությունը՝ պատրաստելու տեղաբնակ հետազոտող կադրեր, որոնք արդի գիտական մեթոդներով կիրականացնեն Հայաստանին եւ տարածաշրջանին վերաբերող ուսումնասիրություններ եւ հետազոտություններ: Այդպիսով, ՀՈՒԿ-ը ձգտելու է իր համեստ ավանդը ներդնել հայրենի անկախ պետականության ամրապնդմանը, Հայաստանի եւ տարածաշրջանի համընդհանուր զարգացմանն ու ժողովրդավարացմանը:

ՀԱՀ-ը հիմնադրվել է Հայաստանի կառավարության անմիջական մասնակցությամբ, հանրապետության հիմնադիրների լուծման համար անհրաժեշտ արեւմտյան կրթական չափանիշներին համապատասխան որակյալ մասնագետներ պատրաստելու նպատակով: Այս առաքելությամբ՝ Կենտրոնը ձգտելու է իր հետազոտությունները կապել հասարակության տարբեր հատվածների՝ օրենսդիր մարմինների, նախարարությունների, բարձրագույն ուսումնական հաստատությունների եւ պետական ու մասնավոր կազմակերպությունների հասարակական-քաղաքական

ներկա պահանջներին, որը կնպաստի հասարակական-քաղաքական կյանքում տեսականի եւ գործնականի սերտ համագործակցությանը: ՀՈՒԿ-ը առանձնահատուկ ուշադրություն է դարձնելու կիրառական հետազոտությունների գործնական ներդրմանը եւ, զուգահեռաբար, համապատասխան կադրերի պատրաստմանը, որպեսզի իր աշխատանքի արդյունքները հեշտությամբ իրականացվեն Հայաստանի պայմաններում:

Համագործակցելով ՀԱՀ-ի կազմին, Կենտրոնը ձգտում է ամրապնդել կապը դասախոսների, գիտաշխատողների եւ ուսանողների միջեւ՝ օգտագործելով նրանց փորձն ու գիտելիքները, ինչպես նաեւ՝ համալսարանի հնարավորությունները: Հատկանշական է նաեւ, որ Կենտրոնը կկազմակերպի տեղացի եւ արտասահմանցի գիտական-դասախոսների եւ մասնագետ-հետազոտողների փոխանակումը: Այդ համագործակցությունը զարկ կտա Կենտրոնի աշխատակիցների որակական աճին:

Նկատի առնելով մասնագետների միջեւ համատեղ հետազոտական աշխատանքների անհրաժեշտությունը, եւ հաշվի առնելով կոմունիստական հասարակարգում Հայաստանի տասնամյակների գաղափարախոսական մեկուսացումն ու տեղեկատվության խտրականությունը, Կենտրոնը կարեւորելու է Հայաստանի եւ տարածաշրջանի բարձրագույն ուսումնական հաստատությունների միջեւ մասնագիտական եւ ուսումնական կապերի ընդլայնումը: Սրանից ելնելով, Կենտրոնը ձգտելու է միասնաբար կազմակերպել համատեղ քննարկումներ, փոխանակել բաց տեղեկատվություն եւ նմանաբնույթ այլ աշխատանքներ, օժանդակելու համար համընդհանուր ուսումնական գործընթացի կազմավորմանը: Իսկ իր մասնագիտական մակարդակը բարձրացնելու եւ գիտելիքները ընդլայնելու համար, ՀՈՒԿ-ը սերտորեն

կիամագործակցի ՀԱՀ-ի հետազոտական այլ կենտրոնների հետ:

ՀՈՒԿ-ի նպատակներից է նաեւ ստեղծել Հայաստանի մասին տեղեկատվության եւ փվյալների կենտրոն /բանկ/, ուր կներառվեն արեւմտյան տեղեկատվության կարեւորագույն աղբյուրները, որոնք կծառայեն ոչ միայն Կենտրոնին, այլեւ բաց կլինեն նմանատիպ ուրիշ կազմակերպությունների առջեւ:

Տեղեկատվության մեր դարաշրջանում, նկատի առնելով փաստերի եւ տեսակետների ուղիղ կապի հնարավորությունը, Կենտրոնը ձգտելու է կատարել իր ուսումնասիրությունները համեմատական վերլուծության սկզբունքով: Անցումային շրջանին բնորոշ ընդհանրությունների կողքին, Կովկասյան տարածաշրջանը բախվում է այնպիսի բարդ խնդիրների, որոնց լուծումները պահանջում են առաջին հերթին տարածաշրջանային առանձնահատուկ վերաբերմունք: Ուստի կարեւորագույն հիմնահարցեր ուսումնասիրելիս, Կենտրոնը կցուցաբերի ռեգիոնալ մոտեցում:

Խթանելով գիտական փորձի փոխանակմանը այլ ուսումնական հաստատությունների հետ՝ Կենտրոնը կնպաստի Հայաստանի եւ տարածաշրջանի խնդիրների գիտականորեն ընկալմանը: Ապահովելով բաց տեղեկատվություն եւ կազմակերպելով քննարկումներ՝ Կենտրոնը մաս կկազմի Հայաստանի ժողովրդավարության առաջընթացին եւ գործող քաղաքական համակարգին:

ՀՈՒԿ-Ի ՀԵՏԱԶՈՏՈՒԹՅՈՒՆՆԵՐԻ ԲՆԱԳԱՎԱՌՆԵՐԸ

Կենտրոնի ծրագիրը բաղկացած կլինի հիմնարար-հետազոտական, մշակումների եւ կրթական աշխատանքներից, որոնք կիրազործվեն սոցիալ-քաղաքական եւ իրավագիտական բնագավառներում: Կենտրոնը կընդունի վճարովի հետազոտությունների պատվերներ եւ ցույց կտա տեխնիկական օգնություն: Կենտրոնը հետազոտական աշխատանքներ կկատարի հետեւյալ բնագավառներում:

Կառավարական համակարգ եւ ժողովրդավարություն

Կոմունիստական հասարակարգից դեպի շուկայական էկոնոմիկա եւ ժողովրդավարություն անցումային շրջանում, իշխանությունների դերն ու նշանակությունը կարիք ունեն ամբողջական գիտական վերանայման: Հետազոտությունների այս բնագավառը կենտրոնանալու է սոցիալ-քաղաքական փոփոխությունների տարբեր հարցերի վրա: Դրանք իրենց մեջ ներառում են պետական իշխանության, մասնավոր սեկտորի եւ այլ ինստիտուտների միջեւ նոր հարաբերություններ, որոնցով պայմանավորված են հետագա բարեփոխումները:

Այս ուսումնասիրությունների շարքում Կենտրոնը հատուկ ուշադրություն կդարձնի հասարակական կառավարման խնդիրներին, հանրապետական եւ շրջանային պետական կառույցների վերաբերյալ տեղեկատվության հարցերին: ՀՈՒԿ-ը կիրականացնի վերլուծություններ կապված Հայաստանում իրականացվող սահմանադրական, ադմինիստրատիվ բարեփոխումների եւ դրանց հետեւանքների վերաբերյալ, ներառյալ իշխանությունների գործելակերպը եւ միջգերատեսչական հարաբերությունները:

Արդյունքում ստացված հանձնարարականները կաջակցեն բարձրացնելու այդ ուղղությամբ տարվող պետության գործունեության արդյունավետությունը:

Հայաստանի Հանրապետության անցումը բազմակարծության վրա հիմնված հասարակարգի ի հայտ է բերել նոր սոցիալ-քաղաքական երեւույթներ: Կենտրոնը կձգտի նպաստել ժողովրդավարական գործընթացների եւ մեխանիզմների զարգացմանը՝ ուսումնասիրություններ կատարելով քաղաքական կուսակցությունների, ընտրական գործընթացների, քաղաքական դիրքորոշումների եւ նրանց վարքագծի, մասսայական լրատվական միջոցների, հասարակական կարծիք ձեւավորող մեխանիզմների, որոշակի շահեր արտահայտող խմբերի, ինչպես նաեւ հասարակական հիմունքներով գործող կազմակերպությունների հետ առնչվող խնդիրների մասին:

Իրավունք եւ օրենսդրություն

Այս բնագավառում ուսումնասիրությունները կկենտրոնանան հետեւյալ հարցերի վրա. իրավական պետության հիմք հանդիսացող ինստիտուտների ձեւավորում, զարգացում ու դրանց ֆունկցիոնալ փոփոխություններ, օրինաստեղծ գործընթացների վերաբերյալ ինֆորմացիոն կենտրոնի հիմնադրում, օրենսդրական հիմունքների վերլուծում, ինչպես նաեւ օրենքների իրագործման հնարավորությունների քննարկում: Այսպիսով, Կենտրոնը իր ավանդը կներդնի Հայաստանում անհատի իրավունքների եւ սեփականատիրության հիման վրա կառուցվող հասարակարգի զարգացմանը:

Ռեգիոնալ ուսումնասիրություններ

Խորհրդային Միության քայքայումը եւ անկախ հանրապետությունների առաջացումը Կովկասում, կենտրոնացրել է միջազգային հանրության ուշադրությունը աշխարհաքաղաքական կարեւորություն, զարգացման ու կոնֆլիկտների երկակի պոտենցիալ ունեցող այդ ռեգիոնի վրա:

Հետեւաբար, Կենտրոնը կուսումնասիրի փարածաշրջանի արդի պատմությունը, մշակույթը, սոցիալ-տնտեսական ու քաղաքական իրավիճակը, հանրապետությունների զարգացման գործընթացները, միջպետական հարաբերությունները, ինչպես նաեւ նրանց քաղաքական դիրքորոշումները: Իր աշխատանքով Կենտրոնը կնպաստի Կովկասի ռեգիոնալ ինտեգրացմանը, փարածաշրջանի հանրապետությունների շահերի համադրմանը, ռեգիոնալ կոնֆլիկտների լուծումների որոնմանն ու առաջարկմանը, ինչպես նաեւ միջազգային համագործակցությանը:

ՀՈՒԿ-Ի ԳԻՏԱԿԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԸ ԵՎ ՀՐԱՏԱՐԱԿՉԱԿԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅՈՒՆԸ

* Կենտրոնը կտարածի հասարակությանը մատչելի տեղեկատվություն իր հետազոտությունների արդյունքների մասին՝ գրքերի, գրքույկների, մենագրությունների, բրիֆինգների եւ գիտաժողովների արձանագրությունների հրապարակումով:

* Կենտրոնը կկազմակերպի երկխոսություններ եւ քննարկումներ իր ուսումնասիրությունների թեմաների շրջանակներում:

Կենտրոնը կնախաձեռնի նաեւ սեմինարներ, գիտաժողովներ, համագումարներ, իսկ որոշակի հարցեր քննարկելու համար այլ կարգի հանդիպումներ՝ գիտնականների, մասնագետների եւ հասարակաքաղաքական ոլորտի պատասխանատու դեմքերի մասնակցությամբ:

* Խրախուսելու համար հասարակական գիտությունների զարգացումը Հայաստանում, Կենտրոնը հետազոտական աշխատանքի կիրավիրի հայաստանաբնակ հասարակական գիտությունների որակյալ մասնագետների: Թեկնածուների միջեւ ընտրությունը կկատարվի մրցութային կարգով, իսկ ուսումնասիրությունները կֆինանսավորի Կենտրոնը: Ֆինանսական հնարավորությունների դեպքում, այս ծրագիրը ապագայում կներգրավի Կովկասյան տարածաշրջանում գործող այլ հաստատություններից հրավիրված հետազոտողների:

* Հետազոտվող թեմաների շրջանակներում ոչ պաշտոնական ելույթների համար Կենտրոնը կտրամադրի իր լսարանը, որտեղ կփոխանակվեն ազատ մտքեր ու տեսակետներ գիտնականների, մասնագետների, հասարակության ականավոր դեմքերի, դիվանագետների եւ ղեկավար անձանց միջեւ:

ՀՈՒԿ-Ի ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

* Կենտրոնը կիրականացնի անվճար ինտենսիվ ուսուցում, կկազմակերպի հատուկ դասընթացներ այն մասնագետների եւ առանձին խմբերի համար, որոնք հետաքրքրված կլինեն հետազոտվող թեմաներով:

* Խթանելու համար Հայաստանի քաղաքացիների ակտիվությունն ու մասնակցությունը հասարակական կյանքին, Կենտրոնը կտրամադրի տեղեկատվություն հասարակական, մասնագիտական, կամավոր եւ ոչ պետական կազմակերպություններին, իսկ անհրաժեշտության դեպքում նրանց կօգնի նաեւ իրենց աշխատանքային ծրագրերը կազմելուն:

* Կենտրոնը կձգտի դառնալ հավաքատեղի՝ ի սպաս դնելով իր հնարավորությունները Հայաստանի դպրոցներին, ինստիտուտներին, համալսարաններին եւ այլ կրթօջախներին, աշխուժացնելու նրանց միջեւ համագործակցությունը ու դրանով նպաստել կրթական կյանքում հիմնախնդիրներին լուծումներ գտնելուն:

ԼՐԱՑՈՒՑԻՉ ՏԵՂԵԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Հասարակական ուսումնասիրությունների կենտրոնի մասին լրացուցիչ տեղեկություններ ստանալու համար խնդրում ենք դիմել հետևյալ հասցեով.

Երևան 375019, Մարշալ Բաղրամյան 40,
Հայաստանի ամերիկյան համալսարան
ՀՈՒԿ-ի տնօրեն՝
դոկտոր Նիկոլ Բ. Շահգալդյան

Հեռախոսներ՝ 27-32-98; 27-16-42
տեղական ֆաքս՝ 27-10-13
միջազգային ֆաքս՝ 151-048